

**Մտորումներ երկխոսության հաղորդակցական-գործաբանական
էության շուրջ**

Ջադինյան Նինա

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-28>

Հանգուցային բառեր. միջգիտակարգ, ճանաչողություն, տեղեկատվություն, ճանաչողական գործառույթ, գեղագիտական գործառույթ, խոսույթ, փիլիսոփայություն, իմաստաբանություն

Նախաբան

Նորագույն լեզվաբանական աշխատություններում նկատվում է հետաքրքրությունների շրջադարձ կառուցվածքային համասեռ նկարագրություններից դեպի ուսումնասիրվող լեզվական երևույթների արտաքին հաղորդակցական և գործաբանական նկարագրերը, որոնք ավելի ու ավելի հաճախ միջգիտակարգային մոտեցումներ են պահանջում: Պատմականորեն այս երևույթը կարելի է բացատրել մի շարք գործոններով և օրինաչափություններով: Դրանցից է, նախևառաջ, գլոբալ հաղորդակցության դաշտի ձևավորումը, որով պայմանավորվում է լեզվի նկատմամբ կիրառական մոտեցման ընդգծվածությունը, և որը պահանջում է միջմշակութային ու միջլեզվական իրողությունների համարժեքության կամ, առնվազն, թարգմանելիության խոչընդոտի լուծում: Փոփոխվում են, մի կողմից, հաղորդակցության նպատակները, մյուս կողմից՝ միջոցները և ուղիները: Վերջիններս պահանջում են քննարկել լեզվի գործածական հնարավորությունները և դրսևորումները:

Լեզվաբանական հետաքրքրությունների տեղաշարժի մյուս կարևոր օրինաչափությունն այն է, որ լեզվի և խոսքի ուսումնասիրությունները հասել են զարգացման այն փուլին, երբ կենդանի լեզուները իբրև կառույց հետազոտելու և նկարագրելու աշխատանքները, թերևս որոշ բացառությամբ, ըստ էության, ավարտված են, և լեզուն առարկայանում է իր կայացման ավելի շատ խոսքային, քան կառուցվածքային կերպով: Համապատասխանաբար, քննության են արժանանում խոսքի նմուշները, որոնք առավել ակնառու կերպով են վեր բանում տվյալ լեզվի և ընդհանրապես լեզուների գործաբանական առանձնահատկություններն ու հնարավորությունները: Նշված երկու պայմանները մասամբ են բացատրում լեզվաբանության զարգացման արդի ուղղությունները, սակայն արդեն վստահաբար կարելի է խոսել այն մասին, որ շատ հաճախադեպ են դարձել նաև լեզվաբանական այնպիսի հաղորդակցական-գործաբանական միջգիտակարգեր, որոնց ուսումնասիրության առարկան խոսքն է կամ անգամ խոսողությունը, իսկ խոսքի ամենատարածված գոյածը, անշուշտ, երկխոսությունն է՝ որպես հաղորդակցման հիմնական տեսակ և ճանաչողության միջոց:

Թեմայի արդիականությունը

Նորագույն լեզվաբանական ուսումնասիրություններում նկատվում է հետաքրքրությունների տեղաշարժ՝ կառուցվածքային մոտեցումներից դեպի լեզվի հաղորդակցական և գործաբանական կիրառությունները: Երկխոսությունը կարևոր է ոչ միայն տեղեկատվության փոխանցման, այլև ճանաչողական և մշակութային գործընթացների ուսումնասիրության համար:

Չողվածի նպատակն է՝ համապարփակ հետազոտել երկխոսության հաղորդակցական, ճանաչողական և դիսկուրսիվ գործառույթները՝ լեզվաբանական, իմաստաբանական և գեղարվեստական համատեքստում:

Ուսումնասիրության խնդիրներն են՝

- վերլուծել երկխոսության տեսական հիմունքներն ու պատմական օրինակները,

- հետազոտել արտալեզվական գործոնների ազդեցությունը երկխոսության վրա,
- դիտարկել երկխոսության կիրառությունները գեղարվեստական և փիլիսոփայական տեքստերում,
- համեմատել տարբեր դիսկուրսային մոտեցումներ և գնահատել դրանց գործածելիությունը հայերեն լեզվական կոնտեքստում:

Ուսումնասիրության մեջ կիրառել ենք խնդրո առարկայի տեսական հիմնադրությունների վերլուծության և նյութի հասկացական գործիքակազմի ընտրության մեթոդները:

Երկխոսությունը մասն է կազմում ընդհանուր հաղորդակցական համակարգի, որպիսին է լեզուն: Լեզուն, դիտարկվելով որպես մարդկանց միջև հաղորդակցության միջոց, կարող է օգտագործվել տարբեր որակի և տևողության տեղեկատվության հաղորդման համար՝ կախված խոսողի նպատակային կենսասահադրայից, ուղղվածության և դրա փոխանցման պայմաններից:

20-րդ դարի վերջին երկխոսությունն իր արդեն իսկ հայտնի ձևերին ավելացրեց ևս երկուսը՝ երկխոսությունը հանուն հաշտեցման ու խաղաղության և մարդ-մեքենա երկխոսություն: Այդ երկու նոր տեսակները, հետապնդելով փոխըմբռնման ավանդական նպատակը, նախորդներից տարբերվում են նրանով, որ բարձր պահանջկոտություն են հանդես բերում իրենցից սպասվող արդյունքի նկատմամբ: Բնականաբար, երկխոսության այս տեսակների նկատմամբ պիտի աճեր նաև գիտական պահանջկոտությունը, որի կիզակետից էլ արտալեզվական գործոնների դերն ու նշանակությունն են: Այստեղ պետք է հաշվի առնել խոսողի նպատակադրույթը, որով հասկացվում է այն, որ մարդը, օգտվելով լեզվից՝ որպես հաղորդակցության գենիցից, ընտրում է լեզվական միջոցներ և օգտագործում դրանք օբյեկտիվ իրականության փաստերի և դրանց նկատմամբ իր վերաբերմունքի մասին տեղեկատվության հնարավորինս համարժեք և արտահայտիչ փոխանցման նպատակով:

Արտալեզվական երևույթների ազդեցության որոնումները տեքստաբանական ուսումնասիրություններում ակնհայտ են: Դրանք մեկնաբանում են լեզվի կարգավիճակն ու զարգացման ընթացքը: Նման որոնումներն են դառնում անցյալի ամենաազդեցիկ գրական ստեղծագործություններին անդրադարձ կատարելու պատճառը, երբ անհրաժեշտություն է առաջանում վերագնահատելու գնահատվածը, ձևավորված տեսակետները տեղափոխել նոր դարաշրջան ու նոր արժեքային համակարգ ստանալ նոր հասկացություններով և արժեքներով գնահատվող արդյունքներ: Երկխոսության ձևավորման ժամանակ արտալեզվական գործոնների ազդեցությունը կրկնապատկվում է, քանի որ այստեղ արդեն գործ ունենք առնվազն երկու լեզվատաճական աշխարհների հետ, և երկու կենսահամակարգերի ու մտածելակերպերի շփման հարցն է ինքնին բարձրացվում: Նման լեզվական երևույթների ուսումնասիրության համար առավել հարմար են գեղարվեստական երկերը, որոնք մեկ խոսող հեղինակի արտացոլմամբ տալիս են որոշակի իրականության լեզվական և մշակութային, սոցիալ-հոգեբանական և խոսքային պատկերը:

Երկխոսություն եզրույթը հաղորդակցվող երկու կողմերի միջև խոսակցություն է արտահայտում: Այս հասկացությունը իբրև մարդկային հաղորդակցության հիմնական ձև, բարձր զարգացման է հասել իմաստասիրական, տրամաբանական գրույցներից՝ հասնելով մինչև բարձր տեխնոլոգիաների աշխատակարգի մակարդակը: Իսկական ուշադրության պատճառ ենք համարում երկու կարևոր գործառույթ, որ երկխոսությունն իրականանում է մարդու հաղորդակցության և ճանաչողության բնագավառում: Առաջին հաղորդակցական գործառույթը ենթադրում է երկու գիտակցությունների շփում, որի ակնկալված արդյունքը հաղորդակցվող կողմերի փոխըմբռնումն ու համագործակցությունն է՝ հենված տեղեկատվության արդյունավետ բաշխման վրա: Երկրորդ առաջինից ածանցյալ գործառույթը ճանաչողությունն է, որին ուղղված էին անտիկ փիլիսոփայական երկխոսությունները: Երկխոսությամբ հաղորդակցվելը հնարավորություն է տալիս վերակառուցել և լրացնել աշխարհի և մարդկանց մասին ունեցած պատկերացումները, ստանալ ոչ միայն անհրաժեշտ տեղեկատ-

վություն, այլև դրա համապատասխան գնահատականն ու արժևորման հնարավորությունը: Ինքնին հասկանալի է, որ այս երկու գործառնությունները փոխկապակցված և փոխլրացնող են: Ի վերջո, որպես խոսքի տեսակ՝ երկխոսությունն ունի նաև գեղագիտական գործառնությո, որի իրականացումն առավել նպատակահարմար է դիտարկել գեղարվեստական ստեղծագործությունների մեջ: Գեղարվեստական գրականության մեջ երկխոսությունների առատորեն առկա լինելը ստիպում է ենթադրել, որ դրանք, բացի վերոբերյալը, ունեն առնվազն ևս մեկ գործառնությո: Մենք փորձում ենք առաջ քաշել այն կանխավարկածը, որ այդ գործառնությոը ծառայում է հեղինակային խոսքի որոշակի ոճական և արտահայտչական որակներ պայտհովելուն, գործառնությո, որ կարելի է անվանել դիսկուրսիվ կամ խոսությոյին գործառնությո: Դրանք բացահայտումը, թերևս, հնարավոր է բանասիրական համալիր քննության միջոցով, որում մենք մասնավորապես ենթադրում ենք լեզվագործաբանական, հոգեկեզվաբանական, կառուցվածքային և իմաստաբանական, որոշ մասով՝ գրականագիտական ուսումնասիրության բաղադրիչների առկայությունը: Թե ինչպիսի որակներ կարող է ապահովել գեղարվեստական երկխոսությունը, հնարավոր է պարզել միայն կոնկրետ ժանրի ստեղծագործությունների համալիր վերլուծության շնորհիվ՝ նկատի ունենալով երկխոսության մասին եղած բոլոր ավանդական պատկերացումները և նորագույն գործաբանական մոտեցումները, ինչպես նաև տվյալ հեղինակի ստեղծագործական ուղու առանձնահատկությունները: Մյուս հարթությունը, որում դիտարկվում է երկխոսությունը, միջմակութային հաղորդակցությունն է, որում թարգմանությունը մշտապես կարելի է դիտարկել իբրև մշակութային երկխոսության հաղորդակցում:

Երկխոսությունն իբրև հաղորդակցության տեսակ և, մասնավորապես, որպես ճանաչողության միջոց՝ մարդկային հասարակությանը զուգընթաց տեսական պատմական զարգացում է անցել: Կարելի է ենթադրել, որ երկխոսության երկու գործառնությունները՝ տեղեկատվության հաղորդումն ու հուզագրացական արժեքների հաղորդումը, միասնաբար նպաստել են դրա իմաստասիրական գործառնությոի ձևավորմանը: Պատմությանը հայտնի են փիլիսոփա Պլատոնի երկխոսությունները, որոնց մեջ առկա է որոշակիորեն պարզ կամ ներքինաստ մի անհամաձայնություն, և երկխոսող մասնակիցների նպատակն է ցրել այդ անհամաձայնությունը: Փիլիսոփա Սոկրատեսի համար հատկանշական է իր գրուցակցին փորձել հետագա համոզումների համար, ընդհուպ մինչև այն պահը, երբ իրենց մեջ եղած հակադրությունը կհասնի բանավիճային համոզմունքի կամ վարկածի:

Գրականագետները սովորաբար ենթադրում են, որ Պլատոնը երկխոսության կանոնավոր գործածումը ներկայացնում էր որպես անկախ գրական ժանր, որը ծագել է անտիկ թատերագիրներից: Պլատոնը հետագայում պարզեցրել է այդ ձևը՝ հասցնելով գուտ տրամաբանական խոսակցության, մինչդեռ կերպարաստեղծման գեղարվեստական տարրը անխաթար է թողել: Պլատոնյան երկխոսությունը, որպես հստակ մի ժանր, որ իբրև հռետոր բնորոշում էր Սոկրատեսին, ինչպես նաև որևէ փիլիսոփայական հարց քննարկող մեկ կամ ավելի գրուցակիցների, 20-րդ դարում յուրօրինակ վերածնունդ ապրեց: Այդ երկխոսությունը վերջերս գործածողների թվում էր Ջ.Սանտայանան իր հայտնի «Երկխոսություններ մոռացման մեջ» աշխատությամբ [9]: Այդ աշխատության մեջ ներկայացված են այնպիսի պատմական դեմքեր, ինչպիսիք են Ալսիբիադեսը, Ալիցեննան, Դեմոկրիտը, ինչպես նաև Ա.Մըրդոքը, ով իր «Ակաստոս» և «Երկու պլատոնյան երկխոսություններ» աշխատությունների մեջ որպես գրուցակից ներգրավել է ոչ միայն Սոկրատեսին և Ալսիբիադեսին, այլև բնորոշել է երիտասարդ Պլատոնին որպես անհատականություն [7]: Հայ արդի փիլիսոփայական գրականության մեջ հայտնի են Գ. Բրուտյանի «Իմաստասիրական երկխոսությունները», որոնք դասական փիլիսոփայության ավանդույթների ուսուցողական արժեքի հարատևության ապացույցն են [1]: Տեսաբան Մ. Բուբերը իր աշխատության մեջ երկխոսությանը առանձնակի տեղ է հատկացնում: Նա այն առավելապես դիտարկում է որպես շարունակա-

կան հաղորդակցության արդյունավետ միջոց, քան թե որոշակի եզրահանգման հասնելու կամ ինչ-որ տեսակետ արտահայտելու նպատակային փորձ [12]:

Հոգեվեճվաբանության մեջ նշվում է, որ խոսքային գործունեությունը, ինչպես մարդու յուրաքանչյուր գործունեություն, որոշվում է նպատակային դիրքորոշմամբ [10, 15]: Հենց դրանից նպատակային կախվածությունն է, որ խոսողը օգտագործում և իրար է համակցում իմաստային և շարահյուսական միավորները՝ ստեղծելով իրական արտահայտում: Արտահայտում ասելով այս դեպքում հասկանում ենք խոսքային արտաբերում, որը բնորոշվում է խոսողի մտադրությամբ, կոնկրետ իրադրության այս կամ այն տարրերի առանձնացման ցանկությամբ, իրադրության մեջ լսողին իր միտքը հասկանալի դարձնելու ձգտմամբ: Հաղորդակցության գործընթացը երկկողմանի է, այսինքն՝ այն կապված է ոչ միայն խոսողի մտադրության, այլև լսողի կողմից խոսքի ընկալման հետ: Հենց այդ պատճառով էլ հաղորդակցական գործընթացի ուսումնասիրությունը պետք է կատարվի՝ հաշվի առնելով խոսողի մտադրությունը և գրուցակցի ռեակցիան: Հաղորդակցային գործընթացի այս երկու կողմերին առավել հստակ կարելի է հետևել՝ ուսումնասիրելով երկխոսությունը, որն անմիջակա-նորեն արտացոլում է հաղորդակցային իրադրությունը:

Երկխոսության քննությանը զուգահեռ հարկ է անդրադառնալ դրա արդի տեսություններին: Երկխոսությունը իբրև դիսկուրսի (խոսույթի) տեսակ, թերևս, ամենացայտունն է, քանի որ այս երկու հասկացությունների բնութագրումներում մեծ ընդհանրություններ ենք գտնում: Դիսկուրսը իմաստաբանության մեջ գործածվող մի եզրույթ է, որն օգտագործում է ոչ միայն կենդանի խոսքի վերլուծության մեջ, այլև վերաբերում է հասարակական հաղորդակցությանը: Վերջին մոտեցումը հաճախ կապվում է Մ. Ֆուկոյի և Յ. Հաբերմասի «Հաղորդակցային ակտի տեսություն» աշխատության հետ., հեղինակներից յուրաքանչյուրը դիսկուրսի սեփական ըմբռնումն ունի [5, 6]: Յ. Հաբերմասը փորձում է գտնել տրանսցենդենտալ օրենքներ, որոնցով խոսողները կարող են համաձայնության գալ առանցքային հարցերի շուրջ, մինչդեռ Մ. Ֆուկոն զարգացնում է դիսկուրսի բուռն վիճաբանության տեսակը: Այս երկու բնութագրումներում ակնհայտ է դիսկուրսի երկխոսական դինամիկայի բնույթը: Տեսաբան Դ. Շիֆրինը թվարկում է «դիսկուրս» հասկացության առնվազն երեք մոտեցում, որոնցից առաջինը «խոսույթ» է համարում «նախադասությունից վեր լեզվական մակարդակը» [9, 11], երկրորդը առաջինին ավելացնում է գործառական շերտը [9], մինչդեռ երրորդ մոտեցումը հակասում է նախորդ երկուսին և տարակուսելի իրավիճակ ստեղծում նաև հայերեն համարժեքության տեսակետից: Այս մոտեցումը ներառում է նաև այնպիսի կոնկրետ պարամետրեր, ինչպիսիք են ժամանակը և տարածությունը: Նման դեպքերում խոսույթային վերացարկումը բացառվում է:

Իմաստաբանության մեջ դիսկուրսը մի քանի նախադասությունից կազմված լեզվական միավոր է, այլ խոսքով՝ գրույց է, վեճ կամ էլույթ: Դիսկուրսի ուսումնասիրությունը կամ վերլուծությունը արվում է և՛ լեզվական, և՛ գործառական ձևով՝ ներառելով բանավոր և գրավոր տեքստերի ուսումնասիրությունը: Դա առարկայական բարդ ոլորտ է, որը ներառում է հանրալեզվաբանությունը, մարդաբանությունը, սոցիոլոգիան և հոգեբանությունը:

Հասարակական գիտություններում դիսկուրսը համարվում է մտածողության առկայացման միջոց կամ, ինչպես Ջ. Բայթերն է նշում, «ընդունելի խոսքի սահման», հնարավոր ճշմարտություն [4]: Այստեղ տեղին է վկայակոչել փիլիսոփայության հիմնահարցերից մեկն ու դրան տրված մի քանի հայտնի պատասխաններ. Ճանաչելի՝ է արդյոք իրականությունը, և ինչպե՞ս է հնարավոր ճանաչողությունը: Ճանաչողությունը, իրավամբ, հնարավոր է դառնում ես և դու երկխոսության պայմաններում: Առկայացած խոսքը նախատեսված է ազդելու շրջապատի վերաբերյալ մեր ունեցած տեսակետների վրա, այլ կերպ ասած՝ անհնար է խույս տալ դրանից, նաև տվյալ դիսկուրսը տրամադրում է հատուկ բառապաշար և հաղորդակցվելու համար կոնկրետ ոճ: Հստ Մ. Ֆուկոյի՝ դիսկուրսը չի կարող նվազել-դառնալ գաղափարական կշռադասում. դա կարելի է ինքնին ընդունել որպես ճակատամարտի դաշտ:

Նա ապացուցում է, որ ճշմարտությունը օբյեկտիվ պարզ է, և որ այն բացարձակ չէ [5]:

Խոսելով երկխոսության հաղորդակցային գործունեության մասին՝ հարկ է նշել նաև, որ այն իրականացվում է՝ կապված դեպքերի կամ այդ դեպքերին առնչվող հարաբերությունների փոխանցման հետ: Ե. Վոլֆը նշում է, որ տեքստային երկխոսությունների բնութագրական գծերից մեկը դեպքերի գնահատման հետ կապված վեճն է [13, 14]: Այստեղ անհրաժեշտ է կրկին խոսել երկխոսության հաղորդակցական-գործաբանական գործառույթների մասին: Ըստ Դ. Բոմի՝ երկխոսությունը իրապես նպատակ ունի մտնելու մարդու մտածողական ողջ գործընթացի մեջ և փոխելու այդ գործընթացի ձևը [3]: Ջ. Օլվուդը տարբերակում է երկխոսական գործողությունների կառավարման երկու տեսակ՝ «սեփական հաղորդակցության կառավարում և ինտերակտիվ հաղորդակցության կառավարում».

առաջինը ծառայում է կառավարելու խոսողի սեփական հաղորդակցությունը՝ կապված դրա ընթացքի, ընտրության և փոփոխության հետ, մինչդեռ փոխազդեցության կառավարումը ծառայում է կառուցելու տեղեկատվության հոսքը՝ նկատի առնելով ունկնդրին, այսինքն՝ երկխոսության մեջ մյուս մասնակցին [2]:

Երկխոսությունը, այսպիսով, իրականացնում է տեղեկատվական, ճանաչողական, ներգործման, արտահայտման գործառույթներ, հնարավորություն է տալիս բացահայտել «բառերով չապավածը» և համատեքստի (սոցիալ-հոգեբանական) ներունակային շերտերը: Կարելի է հաստատել նաև, որ երկխոսությունը մասնավոր հաղորդակցային մի համակարգ է, որը բնորոշվում է արտաբերման այսրոպեականությամբ, արագությամբ և օբյեկտիվ իրականության երևույթների և իրադրությունների արտացոլման գործընթացի անմիջականությամբ. փաստերի նկատմամբ սեփական վերաբերմունքի արտահայտման հարցում մասնակիցների ակտիվությամբ, ինչպես նաև՝ հուզական ռեակցիաների առատությամբ:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-28>

Գրականություն

1. Բրուտյան Գ. Ա., Իմաստասիրական երկխոսություններ, հ. 2, Երևան, «Հայաստան», 1986, 527 էջ:
2. Allwood J. Communication as Action and Cooperation. Gothenburg. Monographs in Linguistics 2. Dept. o Linguistics, University of Goteborg, 1976.
3. Bohm D. Dialogue, http://www.david-bohm.net/dialogue/dialogue_exploration.html
4. Butler J. Discourse of the Human Sciences, <http://www2.sjsu.edu/faculty/awilliams>
5. Foucault M. Questions of Method: An Interview with Michel Foucault. 1991/1981, <http://www.oise.utoronto.ca/depts/sese/>
6. Habermas J. The Theory of Communicative Action, Boston, 1981.
7. Murdoch I. Acastos: Two Platonic Dialogues, Ldn, 1986.
8. Santayana G. Dialogue in Oblivion, <http://www.brainyquote.com/quotes/keywords>
9. Schiffrin D. Discourse Markers, Cambridge, Cambridge University Press. 1987.
10. Балли Ш. Общая лингвистика и вопросы французского языка, Москва, 2001.
11. Блинов А. Общение. Звуки. Смысл. Об одной проблеме аналитической философии языка, Москва, РФО, 1996.
12. Бубер М. Я и Ты, Москва, 1993.
13. Вольф Е. Ф. Грамматика и семантика прилагательного, Москва, 1978.
14. Исаева Л. А. Виды скрытых смыслов и способы их представления в художественном тексте, Краснодар, 1996.
15. Леонтьев А. А. Предисловие к книге Психолингвистика, Москва, «Смысл», 1976.

Размышления о коммуникативно-прагматической природе диалога

Джагинян Нина

Резюме

Ключевые слова: междисциплинарный, познание, информация, когнитивная функция, эстетическая функция, дискурс, философия, семантика

В статье представлены наблюдения за развитием диалога, который как вид дискурса занимает важное место благодаря множеству общих характеристик. Диалог, как форма коммуникации и средство познания, развивался параллельно с человеческим обществом. Основными функциями диалога считаются передача информации и эмоциональных ценностей, которые совместно формируют его семантическую функцию. Особое внимание уделено практическому значению коммуникативно-прагматических функций диалога, влияющих на процесс мышления человека и изменяющих его форму. Исследование рассматривает информационные, познавательные, ментальные и выразительные функции диалога, позволяющие выявить скрытые слои текста и контекста. Дискурс анализируется параллельно с диалогом как семантическое явление, тесно связанное с социальной коммуникацией, выявляя скрытые смыслы, нормы взаимодействия и культурные особенности участников общения. Он позволяет понять, как языковые формы передают знания, эмоции и ценности, формируя когнитивные и социальные модели поведения. Представлен краткий исторический обзор диалога и дискурса, освещены взгляды ведущих теоретиков, направленные на содержание и операциональные аспекты темы, что позволяет комплексно понять коммуникативно-прагматическую природу диалога.

Reflections on the Communicative-Pragmatic Nature of Dialogue

Jaghinyan Nina

Summary

Key words: interdisciplinary, cognition, information, cognitive function, aesthetic function, discourse, philosophy, semantics

The article presents observations on the development of dialogue, which, as a type of discourse, occupies a central place due to many shared characteristics. Dialogue, as a form of communication and a means of cognition, has evolved alongside human society. Its main functions – information transmission and the communication of emotional values – have jointly shaped its semantic role. Special attention is given to the practical significance of dialogue's communicative-pragmatic functions, which influence human thinking and modify its form. The study examines informational, cognitive, mental, and expressive aspects of dialogue to reveal underlying layers of text and context. Discourse is analyzed alongside dialogue as a semantic phenomenon closely linked to social communication. The research also provides a brief historical overview of dialogue and discourse and presents the perspectives of leading theorists, addressing both substantive and operational aspects of the topic. This comprehensive approach highlights the centrality of dialogue in human interaction, cognition, and communication, emphasizing its evolving role in understanding language, thought, and social context.

Ներկայացվել է 26. 11. 2025 թ.

Գրախոսվել է 06. 02. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.